ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Կյանքի շտրիխ կոդավորման միջազգային կոնսորցիումի և ՀՀ գիտության կոմիտեի միջև
Կյանքի շտրիխ կոդավորման և ՀՀ գիտության կոմիտեի միջև 2019 թվականի հուլիսին կնքված Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում ֆինանսական պարտավորությունների մասին

Կյանքի շտրիխ կոդավորման միջազգային կոնսորցիումը (այսուհետ՝ ԿՇԿՄԿ) և ՀՀ գիտության կոմիտեն (այսուհետ՝ ՀՀ ԳԿ), (այսուհետ՝ միասին՝ «Կողմեր») հիմք ընդունելով ԿՇԿՄԿ-ի և ՀՀ ԳԿ-ի միջև 2019 թվականի հուլիսին կնքված Փոխըմբռնման հուշագրով ձեռք բերված համաձայնություններն ու վերջինիս դրույթները՝

փոխըմբռնման հուշագրի շրջանակներում ստանձնած պարտավորություններն ու հանձնառությունները սահմանելու նպատակով կնքեցին սույն Պայմանագիրը.

ՀՀ ԳԿ-ն պարտավորվում է՝

- վճարել համաձայնեցված տարեկան անդամավճարը՝ 5000 CAD (հինգ հազար կանադական դոլար). վճարումը սովորաբար կատարվում է մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 30-ը,
- աջակցել Հայաստանում ԿՇԿՄԿ-ի առաքելությանն առնչվող միջոցառումների իրականացմանը՝ հաշվի առնելով ֆինանսական և այլ ռեսուրսների առկայությունը,
- տեղադրել ԴՆԹ-ի շտրիխ կոդավորման ստուգիչ հաջորդականությունները և հարակից տվյալները ԿՇԿՄԿ ծրագրի կենտրոնական տեղեկատվական հարթակում (BOLD):

Իր հերթին, ԿՇԿՄԿ-ն պարտավորվում է՝

- հոգալ Հայաստանի ազգային ներկայացուցչի՝ ԿՇԿՄԿ գիտական հանձնաժողովի տարեկան ժողովին մասնակցության բոլոր ծախսերը (ճանապարհածախս, կացարան, սնունդ),
- ղեկավարել ԿՇԿՄԿ-ի միջազգային առաքելությանն ու գործունեությանն աջակցելու համար ֆինանսական միջոցներ ներգրավելու գործընթացը՝ ներառյալ ԿՇԿՄԿ տեղեկատվական հարթակների, BOLD-ի և mBRAVE (բազմակի շտրիխ հետազոտության և վիզուալիզացման հարթակ)-ի պահպանումը:

- Հայաստանին՝ որպես ԿՇԿՄԿ-ի անդամ երկրի տրամադրել 50% զեղչ վերլուծական ծառայություններից օգտվելու համար (ԴՆԹ-ի շտրիխ կոդավորման գրադարաններ, լիարժեք սեկվենավորում, ԴՆԹ-ի մետաշտրիխ կոդավորում):

Համաձայնություն

Ստորև ստորագրող Կողմերն ընդունում են սույն Պայմանագրի դրույթները: Սույն Պայմանագրի դրույթները կարող են փոփոխվել կողմերի գրավոր համաձայնությամբ: Սույն Փոխըմբռնման հուշագրի կիրառման ընթացքում ծագած ցանկացած վեճ լուծվում է բարեկամաբար՝ Կողմերի միջև անմիջական խորհրդատվության և բանակցությունների միջոցով:

Կնքված է 2 բնօրինակից՝ անգլերեն և հայերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման ընթացքում ծագած տարաձայնությունների դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն տեքստին:

ՀՀ գիտության կոմիտեի կողմից՝

21. 02. 2020

Սարգիս Հայոցյան
Նախագահ

Ամսաթիվ

Կյանքի շտրիխ կոդավորման միջազգային կոնսորցիումի կողմից՝

24/02/2020

Պրոֆեսոր Պոլ Հեբերտ
Տնօրենների խորհրդի նախագահ

Ամսաթիվ